Մարզպետ Համբարձում Մաթևոսյանի շնորհավորանքի խոսքը Մայիսի 9-ի առթիվ

09.05.2021

Արմավիրի մարզի հարգելի բնակիչներ, սիրելի հայրենակիցներ,
Ի սրտե շնորհավորում եմ բոլորիս մայիսի 9-ի՝ Հաղթանակի և խաղաղության տոնի առթիվ:

Թերթելով պատմության էջերը՝ մեծ հպարտություն ենք ապրում ֆաշիզմի դեմ տարած հաղթանակում հատկապես հայ զինվորների ու սպաների, զորավարների ու հերոսների ցուցաբերած քաջության ու սխրանքի համար:

Դաժան պայքարում նրանք բռունցքվել և հաղթել են՝ պաշտպանելով ու փրկելով նաև Հայաստանն ու հայ ժողովրդին, նոր հնարավորություն ստեղծելով մեր երկրի զարգացման և առաջընթացի համար:

Ու այս հաղթական տոնը մեզ պարգևելու համար առանձնահատուկ շնորհավորում եմ բոլորիս հետ այն նշող վետերաններին, շնորհակալություն հայտնում նրանց գործած սխրանքների համար և գլուխ խոնարհում հանուն հայրենիքի պաշտպանության ընկած բոլոր հերոսների հիշատակի առջև:

Հավերժ փառք հաղթանակներ կերտած մեր պապերին, հայրերին ու եղբայրներին: